գույն դիվանում կուտակված բողոքների և զանազան դատական գործերի քննություն[27]։ Այդ գործերի մեջ քիչ չէին նաև Զուխուր-Սա'դի վիլայեթի ռայաթներից ստացված բողոքները[28]։

Իսքանդար Մունշին «Աբբասյան աշխարհարար պատմության» առաջին հատորում թվարկում է շահ Թահմասպի օրոք «Բարձրագույն դիվանի դաֆթարում» արձանագրված 114 ամիրների անուններ։ Այդ ցուցակից պարզվում է, որ XVI դ. երկրորդ կեսում Զուխուր-Սա'դի վիլայեթի մեջ մտնող առանձին շրջաններ որպես օլքա պատկանում էին բոլորովին տարբեր ցեղերի ամիրների։ Մուհամմադի խան Թոխմախի բեկլարբեկության ժամանակ Շորագյալի և ապա Ալաշկերտի հաքիմն էր Կարախան Բայբուրդլուն, Զուխուր-Սա'դի ամիրներից էր նաև Կլիջ-խալիֆա Փաղուկին, օլքաներ ուներ նաև Ալիավութ Իբրահիմ-խալիֆան[29]։

Մուհամմադի խանի բեկլարբեկության առաջին տարիները համեմատաբար խաղաղ էին, որոնց ընթացքում նա ձեռնարկեց որոշ շինարարական աշխատանքներ։ Նրա ժամանակներին է վերաբերում Երևանում, ոռոգման մեծ հնարավորություններով օժտված, խոշոր լճի կառուցումը, որ մինչև վերջերս կոչվում էր «Թոխմախ-խան գյոլ»[30]։

Սակայն այս խաղաղությունը խաբուսիկ էր և հղի նոր ու ավելի ծանր արհավիրքներով։ 1578 թ., երբ Իրանում սրվել էին կըզըլբաշ ցեղերի միջև թագավորական գահի թեկնածության շուրջ ծավալված հակասությունները, և դավադրաբար սպանված շահ Իսմայիլ II-ի տեղ գահ էր բարձրացել շահ Թահմասպի կուրացած որդի Սուլթան-Մուհամմադ Խուդաբանդան, նորից բորբոքվեցին և ավելի մեծ ծավալ ստացան պատերազմական գործողությունները Թուրքիայի և Իրանի միջև։

Կռիվներն սկզբում սահմանագլխային մանր ընդհարումների և ասպատակությունների բնույթ էին կրում։ Այն բանից հետո, երբ Վասպուրականի արևելյան շրջաններում բնակվող քրդական ցեղերի ամիրներն ասպատակության և ավարառության ենթարկեցին Խոյի, Սալմաստի և Ուրմիայի շրջանները, Էրզրումի փաշան ևս 1577—1578 թթ. ձմռանը մեծ արշավախումբ ուղարկեց ասպատակելու Շորագյալի շրջանը, սակայն Կարախան սուլթան Բայբուրդլուն կարողացավ փոքրաթիվ ուժերով ետ մղել այդ հարձակումը։

Նմանօրինակ մանր հարձակումներով շոշափելով կըզըլբաշների պաշտպանության թույլ կետերը, ինչպես նաև ծավալելով քայքայիչ գործունեություն Անդրկովկասի սյունների մահմեդականության և լեռնականների մեջ, 1578 թ. գարնանը օսմանյան 100.000-անոց բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ Էրզրումի վրայով շարժվեց դեպի Վրաստան։ Յանկանալով կանխել արյունահեղ ընդհարումները, Խուդաբանդա շահը որոշում է Մուհամմադի խան Թոխմախի խորհրդականներից վալի բեկ Ուսթաջլուի միջոցով մի հուշագիր ուղարկել սուլթան Մուրադին, պահանջելով վերջ տալ սահմանամերձ փաշաների ոտնձգություններին։ Սակայն նրանք վալի բեկին ճանապարհին ձերբակալում են և սպանում։

---

27 Նույն տեղում, էջ 207։

28 «Հրովարտակներ» I, վավ. 19։

29 Իսքանդար Մունշի, հ. I, էջ 141։

30 Ներկայումս Կոմերիտմիության անվան զբոսայգու լիճը։